

ԱՆՍԽԱԼ ԳՐԵՆՔ

Եթէ 4րդ, 5րդ եւ 6րդ դասարանի աշակերտ ես, մասնակցէ՛
«Պլտիկ-Մպտիկ»ի հայերէն ուղղագրութեան մրցանքին:
(Մանրամասնութիւնները՝ էջ 6)

ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ



«ԱՁԴԱԿ»ի

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՅԱԽԵԼՈՒԱԾ

Ա. ՏԱՐԻ

Թիւ 7

ԴՈԿՏԵՄԲԵՐ 2002

bezdig_mezdig@hotmail.com

Օ՛Ն, ԳՈՐԾԻ



Ամրան արձակուրդը, իր երկար ու տաք օրերով, վստահաբար հաճելի պահեր տուաւ մեր բոլորին:

Բայց արդէն հասա՞ծ է ժամանակը մէկ կողմ դնելու ամրան թուրքիւնը, խաղի երկար ժամերը եւ քիչ մըն ալ... ճուրկութիւնը: Վերամուտ է: Բաւաբենք մեր ուժերը եւ նոր թափով, հանգչա՞ծ միտքով ու մարմնով լճուինք գործի:

Այո՛, գործի: Որովհետեւ դպրոցը աշխատանք կը պահանջէ: Բնականաբար պիտի ըլլան խաղի եւ հանգիստի ժամեր, սակայն միեւնոյն ատեն ամէն օր պիտի սորվիք եւ պիտի տեսնէք նոր բաներ: Այս բոլորը կարելի է պատմել ուրիշներու, որպէսզի անոնք ես բաժնեն ձեր գիտելիքները:

«Պլտիկ-Մպտիկ» կը սպասէ ձեր գձագրութիւններուն, գրութիւններուն եւ նամակներուն:

ՎԵՐԱՄՈՒՏ Է

Վերամուտ, այսինքն՝ դարձեալ մուտք գործել... դպրոց: Աշխարհի չորս ճագերուն գտնուող աշակերտները, ներառեալ՝ Բայաստանի եւ Լիբանանի աշակերտները, վերամուտի ու անոր յաջորդող օրերուն տարբեր վզացումներ կ'ունենան: Ձեզմէ շատեր դպրոց կը վերադառնան ուրախ տրամադրութեամբ, որովհետեւ շատ կը սիրեն դասարան փոխել, նոր գիրքեր ու տետրակներ ունենալ, եթէ շատ հինցած է նախորդ տարուան պայուսակն ու գրչատուփը, նորը ունենալ, եթէ համազգեստն ու կօշիկը հնամաշ էին, ճնողքէն խնդրել, որ նորը գնեն: Ուրեմն, շատերու համար նորութիւնը ուրախութիւն կը պատճառէ: Ծատեր դպրոց կը վերադառնան, սակայն տխուր են, նոյնիսկ՝ երբ իրենց դպրոցական պիտոյքներն ու համազգեստ-կօշիկները նոր են: Ինչո՞ւ: Բաւա-նաբար այս աշակերտները հեռատես են, գիտեն՝ անգամ մը որ վերամուտ հասաւ, մինչեւ յաջորդ ամրան արձակուրդը դաս սորվելու պարտադրանքին տակ պիտի գտնուին: Երրորդ խմբակ մըն ալ կայ, որ նոյնիսկ երբ ոչինչ ու-

Ճարունակութիւնը տեսնել էջ 6



Սագօ Դաւիթ (11 տարեկան, Ալգ. Աքսոր Գասարձեան վարժարան)

Ձեր գրութիւնները կամ նամակները կրնաք ուղարկել՝
bezdig_mezdig@hotmail.com
կամ յանձնել՝ «ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ»ի
խմբագրութեան, «ԱՁԴԱԿ»
«Ճաղկոյեան» կեդրոն

ملحق أزياءك



ԱՃԱԿԵՐՏՆԵՐԸ ԿԸ ԽՕՍԻՆ

ԱՐՁԱԿՈՒՐԴՐ, ՎԵՐԱՄՈՒՏԸ ԵՒ ՄԵՆՔ

Բոկտեմբերի առաջին օրերուն հետ կը բացուին դպրոցներուն դռները: Աշակերտներէն ոմանք ուրախ, ոմանք տխուր, կը սկսին յաճախել իրենց դպրոցները: Առաջին օրերու պատ պահերէն եւ խաղ-դասերէն ետք վերջապէս կը սկսին դասի «լուրջ» օրերը: Աշակերտները իրարու կը պատմեն ամրան արձակուրդին մասին, իրարու կը խօսին, թէ ինչպէս պատրաստուեցան վերամուտի եւ ինչպէս կը դի-

մաւորեն նոր տարեշրջանը...

վերամուտի առիթով «Պատիկ-Սպտիկ»ի խմբագրական կազմը շրջեցաւ լիբանանահայ կարգ մը վարժարաններ եւ պոլոյցներ ունեցաւ աշակերտներուն հետ: Դժբախտաբար կարելի չէր այցելել բոլոր վարժարանները եւ պոլուցել բոլոր աշակերտներուն հետ: Ահա թէ ինչ կը պատմեն աշակերտները.



ԱՐՁԱԿՈՒՐԴՐԻ ԳԵՂԵՑԻԿ ՈՒ ԲԱՆԳԻՍՏ ՕՐԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

- Այս ամառ «Ովստիս» ամառնային դպրոցը գացի: Ճատ հաճելի ժամանակ անցուցի, մանաւանդ պտոյտներու ատեն: (Գէորգ Ապաճեան, Դ. դասարան, Ազգ. Բառասնից Մանկանց վրժ.):

- Ամրան ընթացքին թէ՛ ուրախ էի եւ թէ տխուր: Ուրախ էի, որովհետեւ դաս չկար եւ ուկաճ ատենս կը խաղայի: Տխուր էի, որովհետեւ ընկերներէս հեռու էի: Ամառնային դպրոց գացի եւ հոն շատ ուրախ ժամանակ անցուցի: Մարկական խաղեր խաղացինք եւ նոր բաներ սորվեցանք: (Վահէ Աէֆրեան, Զ. դասարան, Կեդրոնական Բարձր. վրժ.):

- Սեպտեմբերին բանակումի գացի: Ճատ ուրախ էի, բայց նաեւ քիչ մը տխուր էի, որովհետեւ շուտով դպրոցը պիտի սկսէր: (Սիրան Պէրէրեճեան, Դ. դասարան, Մ. եւ Բ. Արսլանեան ճեմարան):

- Ամառը գիւղը շատ հաճելի պահեր անցուցի: Ամէն ճաբաթ օր «Արեգ» մանկապատանեկան թատրոնի փորձերուն կը հետեւէի: Միայն Սեպտեմբերին յիշեցի, որ պէտք է դաս ընեմ: (Բրակ Փափազեան, Ե. դասարան, Մ. եւ Բ. Արսլանեան ճեմարան):

- Ամառը մասնակցեցայ Օգնութեան Խաչի «Կապուրման կայան»ին: Այնճարի մէջ շատ ուրախ օրեր անցուցի: Իսկ ամէնէն սիրած պահս գիշերային հանդէսներն էին, երբ կ'երգէինք, թատրոն կ'ընէինք, կ'արտասանէինք... (Լայա Մալաքեան, Ե. դասարան, Բ.Բ.Ը.Մ.ի Կարմիրեան վրժ.):

- Ամառը Վիեննա գացի: Բոն թանգարաններու մէջ պտտեցայ: Իսկ կենդաբանական պարտէլին մէջ տեսայ առիճ, վագր, օճ: (Նանոր Վապելեան, Ե. դասարան, Բայ կաթողիկէ Ս. Ազնէս վրժ.):

ՊԵՏՔ Է ՎԵՐԱՄՈՒՏԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

- Անհամբեր էի, որ դպրոցի ընկերներս նո-

րէն տեսնեմ: (Թային Բուրէնեան, Դ. դասարան, Ազգ. Բառասնից Մանկանց վրժ.):

- Դպրոցի պատրաստուելու ատեն տխուր էի, որ պիտի վերջանար մեր արձակուրդը, բայց նաեւ ուրախ եւ անհամբեր էի, որովհետեւ շատ կ'ուզէի տեսնել հին ընկերներս եւ ունենալ նոր ընկերներ: (Թետի Խաչատուրեան, Դ. դասարան, Կեդրոնական Բարձր. վրժ.):

- Ամառը քիչ մը ծանձրացայ եւ ատոր համար շատ ուրախ էի, որ դպրոցը պիտի սկսէր: Վերամուտէն մէկ օր առաջ անհամբեր էի եւ չկրցայ քնանալ: (Լուի Յակոբեան, Ե. դասարան, Կեդրոնական Բարձր. վրժ.):

Վերամուտէն մէկ օր առաջ շատ անհամբեր էի: Նոր պայուսակներ, գիրքեր եւ մատիտներ գնեցինք: Նաեւ քիչ մը նեղուած էի, որովհետեւ մէկ դասարան կը բարձրանայինք եւ դասերը աւելի պիտի դժուարանային: Քիչ մը մտահոգ էի: (Աքասիա Փօլատեան, Զ. դասարան, Մ. եւ Բ. Արսլանեան ճեմարան):

- Թէեւ ամառը շատ լաւ անցուցի եւ ուրախացայ, բայց դժգոհ չէի, որ դպրոցը պիտի սկսէր, որովհետեւ ընկերներս կարօտցած էի: (Բերա Տէր Յովհաննէսեան, Ե. դասարան, Բ.Բ.Ը.Մ.ի Կարմիրեան վրժ.):

ՎԵՐԱՄՈՒՏԻ ԲԱՍԱԻ ՍՊԱՍՈՒՄՈՒՄ

- Դպրոցին առաջին օրը, երբ լսեցի, որ քանի մը ուսուցչուհիներ դպրոցը ձգած են, շատ նեղուեցայ, որովհետեւ վիրենք կը սիրէի: (Քրիստաֆըր Մկրտիչեան, Ե. դասարան, Ազգ. Բառասնից Մանկանց վրժ.):

- Դպրոցին առաջին օրն իսկ ուրախութենէս նոր գիրքերս սկսայ կարդալ: Բայց հիմա արդէն ամառը կը կարօտնամ: Երանի ամառ ըլլար: (Սարին Ալթունեան, Դ. դասարան, Կեդրոնական Բարձր. վրժ.):

- Ճատ չար եմ, եւ հսկիչը միշտ կը պատժէ Վիս: Այդ պատճառով քիչ մը տխուր էի, որ վերամուտ է: (Նժդեհ Մկրտիչեան, Դ. դասարան, Մ. եւ Բ. Արսլանեան ճեմարան):

- Ուրախ էի, որ դպրոցը սկսաւ, բայց չէի ուզեր, որ ճանր դասերը ետ գան: (Դալար Թերփիզեան, Դ. դասարան, Բ.Բ.Ը.Մ.ի Կարմիրեան վրժ.):

Իսկ Բայ կաթողիկէ Ս. Ազնէս վարժարանէն Մակի Քէհեան, Քրիստէլ Եարէտ եւ Վարանդա Եագուպեան (Դ. դասարան) վերամուտի իրենց պագուումները արտայայտեցին նոր սորված այս ոտանաւորով.

«Ախ այս ամառը, որքան շուտ անցաւ, կարճես երէկ էր դասը վերջացաւ. Չյաջողեցայ ոչ մէկ բան ընել, եւ ահա նորէն հասաւ Բոկտեմբեր»:

«ՊՁՏԻԿ - ՄՁՏԻԿ»Ի ՄԱՍԻՆ

- Ամրան արձակուրդին շատ կարգացի «Պատիկ - Սպտիկ»ը: Բոլոր թիւերը կը հաւաքէի, կը շարէի եւ կը կարդայի քանի մը անգամ: Գրեթէ գոյ սորվեցայ: (Յոլեր Աղճեան, Դ. դասարան, Ազգային Բառասնից Մանկանց վրժ.):

- Ճատ կ'ուրախանամ, երբ իմ եւ ընկերներուս գրութիւնները կարդամ «Պատիկ - Սպտիկ»ի մէջ: Կ'ուզեմ, որ շաբաթաթերթի վերածուի: (Բայիկ Լատոյեան, Զ. դասարան, Մ. եւ Բ. Արսլանեան ճեմարան):


- Ամէն ամիս անհամբեր կը սպասեմ «Պատիկ - Սպտիկ»ի թիւին: Կը խնդրեմ, որ աւելի էջեր ունենայ թերթը: (Ճողեր Յովհաննէսեան, Ե. դասարան, Մ. եւ Բ. Արսլանեան ճեմարան):

- Երբ առաջին անգամ «Պատիկ - Սպտիկ»ի մէջ անունս տեսայ, շատ ուրախացայ: Անհամբեր կը սպասեմ, որ թիւը հասնի եւ խաղերը լուծեմ: (Դրօ Էթոյեան, Դ. դասարան, Ազգային Բառասնից Մանկանց վրժ.):



ՄԱՐԶԱԿԱՆ

ՓԻՆԿ – ՓՈՆԿ



Փինկ-փոնկը իր բոլոր յատկություններով եւ օրէնքներով կարելի է անուանել «պստիկ թենիս», որովհետեւ անոր օրէնքները շատ նման են թենիսի օրէնքներուն: Միակ տարբերութիւնը այն է, որ փինկ-փոնկը կը խաղցուի սեղանի մը վրայ եւ բաղդատաբար աւելի պստիկ ռաքէթներով:

Կ'ըսուի, թէ փինկ-փոնկը ծնունդ առած է Անգլիոյ մէջ, ուր 19րդ դարու վերջաւորութեան անգլիացիք ժամանցի համար ծաշասեղաններու վրայ կը խաղային այս խաղը: Իսկ ինչ կը վերաբերի այս խաղին տարօրինակ անունին, անիկա կը ներկայացնէ այն ձայնը, որ գնդակը կ'արձակէ սեղանին վրայ «ցատկըռտած» ժամանակ:

Փինկ-փոնկը կը խաղցուի 2 կամ 4 հոգիով: Անոր նպատակն է գնդակին հարուածները փոխադարձել մինչեւ որ խաղացողներէն մէկը ձախողի յաջող պատասխան մը տալ իր մրցակիցին հարուածին, այսինքն՝ գնդակը հարուածէ սեղանէն դուրս կամ ցանցին:

Այն խաղացողը, որ առաջին անգամ կը հաւաքէ 21 կէտ, կը տիրանայ սէթի մը, իսկ այն խաղացողը, որ 3 սէթերէն 2ին կամ 5էն 3ին կը տիրանայ, կը տանի վերջնական յաղթանակը:

Ներկայիս փինկ-փոնկը բաւական տարածւած մարզախաղ մըն է եւ 1988էն ի վեր մաս կը կազմէ Ողիմպիական խաղերու ցանկին: Աշխարհի տարածքին անոր ախոյեանութիւնը տեղի կ'ունենայ երկու տարին անգամ մը: Իսկ տիրապետողները ընդհանրապէս կ'ըլլան չինացիները, շուէտացիներն ու քորէացիները:

Ինչ կը վերաբերի լիբանանեան փինկ-փոնկին, կը նկատենք, որ սկիզբէն ի վեր Բ.Ս.Ը.Ս. եղած է տիրապետողը՝ շնորհիւ իր մարզիկներուն պայքարի ոգիին եւ հաստատ կամքին: Փատօրէն, անցեալ ամիս տեղի ունեցած Լիբանանի փինկ – փոնկի ախոյեանութեան մրցումներուն Բ.Ս.Ը.Ս.ական Լիպա Պարիկեան աւարտական

մրցումին պարտութեան մատնելով իր խմբակիցը՝ Լարա Քէչէպաշեանը, տիրացաւ աղջկանց ախոյեանութեան, իսկ այս նոյն երկուքը, կոյգերու մրցումներուն միասնաբար յաղթանակներ արձանագրելով, հանդիսացան ախոյեան: Միւս կողմէ, Ալֆրէտ Նաժըմ-Սարգիսեան մեծ իրագործում մը կատարեց՝ գրպանելով 21 տարեկանէն վար տղոց ախոյեանութիւնն ու Լիբանանի տղոց ախոյեանութիւնը:

Սիրելի՛ «Պստիկ-Մստիկ»ի ընթերցողներ, փինկ-փոնկի մրցումներուն ընթացքին Բ.Ս.Ը.Ս.ի մենատիրութիւնը այլեւս դարձած է աւանդութիւն մը, իսկ այն հարցը, թէ այս աւանդութիւնը պիտի շարունակուի, թէ ոչ, կախեալ է ապագայ Բ.Ս.Ը.Ս.ականներէն եւ ինչքէն չէ՝ ձեզմէ: Ուրեմն ջանացէ՛ք ըլլալ հաստատական, որպէսզի կարենաք ապագային ձեզի վստահուելիք պարտականութիւնը լիովին ստանձնել:



ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

● Երկուշաբթի 24 հոկտեմբերէն Կիրակի 20 հոկտեմբերը յայտարարուած է Ֆրանսախօս երկիրներու Յոդ Վեհաժողովի շաբաթ: Լիբանանի մշակոյթի նախարար Պասսան Սալամէ մամլոյ յատուկ ասուլիսով մը ներկայացուց ձեռնարկներուն ժամանակացոյցը:

Առաջին անգամ է, որ արաբական երկրի մը մէջ տեղի պիտի ունենայ այս Վեհաժողովը: Աւելի քան 60 երկիրներու ներկայացուցիչներ՝ նախագահներ, վարչապետներ, նախարարներ եւ պաշտօնական անձնաւորութիւններ պիտի մասնակցին Ֆրանսախօս երկիրներու Վեհաժողովին:

● 2002ի բնագիտութեան Նոպէլեան մրցանակակիրներ հանդիսացան երեք գիտնականներ: Անոնք են՝ Ռէյմոնտ Տէյվիս Ծիւնիլը (Միացեալ Նահանգներ), Մաթթոշի Քոշեպա (Ճափոն) եւ Ռիքարտօ Տիաքանի (Իտալիա): Իսկ բժշկագիտութեան Նոպէլեան մրցանակները շահեցան գիտնականներ Սիտնի Պրենըր, Ճոն Սալթըն (Քրիտանիա) եւ Ռոպըրթ Բորսովիկ (Միացեալ Նահանգներ):

● Գամաշխարհային Դրամատան նախագահ Ճէյմս Ուոլֆինսըն եգիպտոսի մէջ յայտարարեց, թէ եգիպտացիներուն 17 առ հարիւրը աղքատութեան մէջ կ'ապրի:

68 միլիոն բնակչութիւն ունեցող եգիպտոսի բնակիչներէն 11.5 միլիոն հոգի աղքատ է:

Գամաշխարհային Դրամատունը յատուկ ճրագիրներ մշակած է եգիպտոսի համար, որպէսզի երկիրը կարենայ պակսեցնել իր աղքատներուն թիւը:



● Քանատացի բեմադրիչ Աթոմ Էկոյեանի «Արարատ» ժապաւէնը 23 Սեպտեմբերին սկսաւ ցուցադրուիլ Երեւանի մէջ: Ժապաւէնին ցուցադրութեան համար հայաստան այցելած են Աթոմ Էկոյեան, կինը՝ դերասանուհի Արսինէ Խանճեան եւ դերասան Էրիք Պօղոսեան:

Այդ առիթով հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան Աթոմ Էկոյեանը պարգեւատրած է մշակութային գործիչներու տրուող ամէնէն բարձր՝ «Նովսէտ Խորենացի» շքանշանով: Աթոմ Էկոյեան եւ Արսինէ Խանճեան նաեւ ստացած են հայաստանի քաղաքացիութիւն եւ անցագիրներ: Նախագահ Ռոպէրթ Քոչարեան յայտնած է, թէ «Արարատ» ժապաւէնը կարելոր քայլ մըն է հայկական Յեղասպանութեան ծանաչման գործընթացին մէջ:



ԱԿԱԶԱՆԳ՝ ԳԻՐՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Գիտե՞ք, թե վերջերս հարուստ երկիրներ, գլխավորությամբ ԱՆԱՀԱՆՁՆԵՐՈՒ ԵՆ ՖՐԱՆՍԱՅԻ, ահապանգ հնչեցուցած են գիրութեան դէմ պայքարի հարստով: Ուսումնասիրութեան մը համաձայն, Ֆրանսայի մէջ 1980ին չափազանց գիրութիւնը 5 - 12 տարեկան մանուկներու 5 - 6 առ հարիւր համեմատութիւնը կը կազմէր. 2000ին այս համեմատութիւնը անցած է 15 առ հարիւրը: Այս ընթացքով յառաջիկայ 25 տարիներուն մանուկներու քառորդը պիտի տառապի գիրութենէ:

Չափազանց գիրութեան անպատեհութիւնները շատ են, սակայն ամէնէն հիմնականը առողջապահական հարցերն են, որոնք կը ձագին աւելորդ ծանրութենէ, օրինակ՝ արեան երակներու գերճնշում, քոլեսթերոլ, շաքարախտ, սրտի հետ կապուած այլ հարցեր, քաղցկեղ, ինչպէս նաեւ չափազանց գիրութիւնը մեզ կրնայ հասցնել մինչեւ մահ:

Սոնքութիւնը (չափազանց գիրութիւն) ունի վանազան պատճառներ, որոնցմէ առաջինը ուտելիքներու տեսակն է, որ անմիջականօրէն կապուած է մեր ներկայ կենցաղին հետ: Երկրորդ

պատճառը ֆիզիքական շարժումներու պակասն է, իսկ երրորդ պատճառը՝ նախքան ճնունդ եւ յետ ճնունդ ժամանակաշրջանը:

Ճանք Ֆուտի բոլոր տեսակները ընդհանրապէս ձեր նախընտրած ուտելիքներն են: Այս ուտելիքները կը յարմարին մեր ներկայ կենցաղին: Օրինակ, շատեր կը նախընտրեն պատկերասփիռի ճանուցումներու ատեն արագ պատառ մը ուտել, ուրեմն այս պարագային դիրին է չիփս, փիցա եւ այլ արագ ուտելիքներով զոհանալ: Արագ ուտելիքները նաեւ ժամանակ չեն խլեր աշխատող ճնողներէն:

Երկրորդ պատճառը դարձեալ կենցաղային պայմաններն են:

Ներկայիս դուք աւելի նուազ կը շարժիք, քան ձեր տարեկիցները՝ 20 տարի առաջ: Ներկայիս դուք աւելի քիչ կը խաղաք ֆիզիքական շարժում պահանջող խաղեր, աւելի քիչ կը քալէք, նուազ աստիճան կը բարձրանաք: Այս բոլորը ժամանակի ընթացքին գիրութիւն կը պատճառեն:

Չափազանց գիրութեան անպատեհութիւններ՝

- Բիւանդութիւններ եւ առողջապահական հարցեր



- Աւելորդ ծանրութիւն
- Ոչ հաճելի տեսք
- Ընկերային հարցեր



- Կշռուիլ,
- Պատկերասփիռ դիտած ժամանակ բնաւ չուտել,
- Երբ տխուր ըլլաք, փոխանակ ուտելու, մարզանք կամ մտային աշխատանք կատարեցէք:

ԻՆՉՊԷՍ ԱՌԱՋՔԸ ԱՌՆԵԼ

- Կանոնաւոր ուտել (նախաճաշ, ճաշ, նախընթիք, ընթրիք).
- Բաւարարական կշռուած ուտել (ամէն տեսակի սնունդ ստանալ),
- Խուսափիլ ճարպ պարունակող կամ ճարպի վերածուող ուտելիքներէ,
- Ճաքաթը քանի մը անգամ կանոնաւոր մարզանք ընել,
- Առիթ չփախցնել ֆիզիքական շարժում ընելու. օրինակ՝ քալել եւ աստիճանով բարձրանալ,
- Ճաքաթը անգամ մը

ՃԱՌՃԱՊԱՏԿԵՐ

ՊՐԷՏ ՓԻԹ՝ ՆՈՐ ԱՔԻԼԼԵՍԸ...

Բոլիվուտի ամէնէն ներկայանալի դերասաններէն նկատուող Պրէտ Փիթ իր նոր ժապաւէնին մէջ պիտի խաղայ Աքիլլէսի դերը: Ինչպէս ծանօթ է, յունական դիցաբանութեան այս հերոսը ունէր միայն մէկ տկար կէտ՝ իր կրունկը: Այս նոր ժապաւէնին անունը պիտի ըլլայ «Թրոյ»:



Նոր ժապաւէնին մէջ: «Փայրթայ աֆ տը Բարիպիլը» անունը կրող ժապաւէնին մէջ ան կը ներկայանայ ճովահէներու ղեկավարի մը դերով: Վախցնելիք դեր մը՝ մինչեւ հիմա հանդիսատեսները չուարձայնող ճոնի Տէփի համար:

ԲԻԼԿ ԿՐԷՆՅ ԵՆ ԾԷՔԻ ՉԷՅՆ՝ ԱՃԵԱՐԻՈ ԾՈՒՐՁ ՊՏՏՈՂ ՆՈՐ ԲԵՐՈՍՆԵՐ

Անգլիացի դերասան Բիլկ Կրէնթ եւ արեւելեան մարտարուեստի ժապաւէններու հերոս Ծէփ Չէյն միասնաբար աշխարհի շուրջ պիտի դառնան 80 օրուան ընթացքին:

Ժիլ Վեռնի «Աշխարհի շուրջը՝ 80 օրէն» վէպէն ներշնչուած ժապաւէնի մը մէջ այս երկու դերասանները պիտի ստանան գրաւ մը շահելու համար 80 օրէն աշխարհի շուրջ դարձող անգլիացիի մը եւ անոր հաւատարիմ ճառագայի դերը: Ժապաւէնը պիտի բեմադրէ Ֆրէնք Քորաչի:

● Մէկ կողմէն չափազանց գիրութիւնը, իսկ միւս կողմէն՝ սովը աւերներ կը գործեն եւ կը խլեն չոհեր:

Աշխարհի բնակչութեան շուրջ 1 միլիարդ կը տառապի չափազանց գիրութենէ: Բարուստ երկիրներու մէջ սոնքութիւնը (չափազանց գիրութիւն) աւերներ կը գործէ եւ կը սպառնայ մարդկային առողջութեան: Ներկայիս 3 մահացողներէն մէկը չափազանց գիրութեան պատճառով բարդութիւններուն հետեւանքով կը պատահի:


Յաւալի է, որ միեւնոյն ժամանակ աղքատ երկիրներու մէջ շուրջ 800 միլիոն մարդ սովի մատնուած է եւ երեխաներ օրով անօթի անկողին կը մտնեն:

Ինչ պատկեր եւ անարդարութիւն:


● Գիտե՞ք, թե գիրութեան ճարպը բաւականին սուղ է, նկատի ունենալով, որ անկէ ձեր բազմաթիւ համար այլեայլ ճախսերը կ'ենթադրեն տարեկան շուրջ 17 միլիարդ տոլար Միացեալ Նահանգներու մէջ:

● Գիտե՞ք, թե օդանաւային կարգ մը ընկերութիւններ շատ գէր ճամբորդներէն պիտի գանձեն մէկի փոխարէն երկու աթոռի գին: Ահաւասիկ՝ նիհարնալու այլ պատճառ մը եւս:

... ԻՍԿ ԾՈՍԻ ՏԵՓ՝ ՆՈՐ ԾՈՎԱԿԵՆ ՍԸ
Դերասան ճոնի Տէփի դեր ստանձնած է Տիպիի



Կրնաս օգնել «Պպտիկ-Մպտիկ»ին գտնելու պայուսակին հասցնող ճամբան:



Սլաքներուն հետեւելով ռը պիտի հասնի «Պպտիկ-Մպտիկ»:

ՎԵՐԱՄՈՒՏ Է

Ճարունակուած՝ Ա. Էջն

Նի նոր, ուրախ տրամադրութեան մէջ է: Ասոնք այն տղաքն ու աղջիկներն են, որոնք գիտեն արժէքը դաս սորվելուն եւ բոլոր դասանիւթներուն հաւասարաչափ կարեւորութիւն տալուն: Ասոնք գիտեն նաեւ դպրոցին մէջ իրենց դասընկեր-դասընկերուհիներուն եւ, ինչու չէ, ուսուցիչներուն հետ միատեղ դպրոցական հաճելի օրեր անցընելու արժէքը:

Սակայն օր մը մտածաճ էք, որ ճնողներն ալ ձեզի նման վերամուտը կ'ապրին: Ասոնց ալ դաս սորվելու օրերը կը սկսին: Ինչպէս: Ձեր մայրերը կամ հայրերը չեն, որոնք կէսօրէ ետք ձեր կողքին նստած ձեր դասերը կը սորվեցնեն ու կը սորվին: Ուշադիր եղէ՛ք, իրենց դասերը չեն սորվիր, ձե՛ր դասերը ձեզի հետ կը սորվին, որպէսզի քիչ մը աւելի թեթեւցնեն դաս սորվելու ձեր հաճելի բեռը:

Գիտէ՞ք, որ մեր ճնողներուն եւ մեր բոլորին ամէնէն հոգատար ճնողը եղած է Մերոպ Մաշտոց: Ան դարերէ ի վեր վերամուտին բոլոր հայ աշակերտներուն կ'ընկերակցի եւ չ'ուզեր վանոնք առանձին ձգել: Այս պատճառով է հաւանաբար, որ «Թարգմանչաց տօն»ը դպրոցներուն մէջ կը յիշատակենք վերամուտի առաջին կամ երկրորդ շաբթուան ընթացքին:

Այս գեղեցիկ առիթով Մերոպ Մաշտոց կիբանանի բոլոր հայ աշակերտներուն կ'ըսէ. «Բարի վերամուտ: Ինչպէս որ ուրիշ ազգերու գիրերը ստեղծողները, ես ալ Այբուբենը ստեղծած եմ ձեզի համար, գուրգուրացէք անոր վրայ եւ լաւ ու ծիշդ սորվեցէք հայերէնը: Բայց չգոհու, չմոռնաք նոյնքան լաւ սորվիլ միւս դասերը: Ուրեմն հաւասար արժէք ու կարեւորութիւն տուէք բոլոր դասանիւթներուն: Այլապէս կը նեղուիմ...»:

ՄՐՅԱՆՔ

ԱՆՍԽԱԿ ԳՐԵՆՔ



-Մրցանքին կրնան մասնակցիլ 4րդ, 5րդ եւ 6րդ դասարանի աշակերտներ:

-Արձանագրութիւնները տեղի կ'ունենան 18 հոկտեմբերէն 20 Նոյեմբեր, հեռաձայնելով 01-260115 թիւին, Երկուշաբթիէն Ուրբաթ, կէսօրէ ետք ժամը 3:00էն 5:00:

-Մրցանքը տեղի կ'ունենայ Կիրակի, 15 Դեկտեմբեր, ժամը 9:00էն 10:00 4րդ դասարան, 10:00էն 11:00 5րդ դասարան, 11:00էն 12:00 6րդ դասարան:

-Իւրաքանչիւր մակարդակի շահողը պիտի ստանայ արժէքաւոր նուէր մը, իսկ բոլոր մասնակցողները պիտի ստանան յիշատակի նուէր:

- Յաւելեալ տեղեկութիւններու համար հետեւիլ «Ազդակ»ի:

Ժամանցին պատասխանները լոյս պիտի տեսնեն «Ազդակ»ի Ճարաթ, 19 հոկտեմբեր 2002ի թիւին մանկապատանեկան էջին մէջ:

ԱՄՍՈՒԱՆ ԲԱՐՅՈՒՄԸ

Կրնան մասնակցիլ 6էն 12 տարեկան աշակերտները: Կտրօնը ամբողջացնելէ ետք վայն հասցնել «ԱԶԴԱԿ»ի խմբագրատուն: Յաջորդ թիւով պիտի յայտարարուի մրցումը շահողին անունը: Ան պիտի ստանայ նուէր մը:

ԲԱՐՅԱՐԱՆ ԹԻՒ 7

1.- Ուր ճնունդ առած է փինկ-փոնկը:

2.- Ի՞նչ կը կոչուի Աթոմ Էկոյեանի վերջին ժապաւէնը:

3.-Նշէ՛ գիրութեան առաջը առնելու միջոցներէն մէկը:


Անուն – Մականուն _____
 Վարժարան _____
 Ծննդեան թուական _____
 Ինքնաձայնի թիւ _____

ԲԱՐՅԱՐԱՆ ԹԻՒ 6Ի ԾԱՌՈՂԸ


Բարցարան թիւ 4ի շահողը Ազատ Պալապանեան (8 տարեկան «Թորոսեան»էն) շահեցաւ անցեալ ամսուան մրցումը: Ան իր նուէրը կրնայ ստանալ «Ազդակ»էն, «Ճաղկոյեան» կեդրոն:



ԻՐԻԿՈՒՆ



- Արեւը շատ էր յոգնւել. ման էր եկեր ամբողջ օրը. «Ի՛նչ է, ըսաւ երթամ, պառկիմ ու ննջեմ»:



ՎԱՃԱՌԱԿԱՆՆ ՈՒ ԹՈՒԹԱԿԸ

Վաճառական մը թուրթակ ունէր: Անգամ մը, երբ գործով Պենկալ պիտի երթար, հարցուց թուրթակին:


- Ի՛նչ բերեմ քեզի համար Պենկալէն:
- Ոչինչ, - ըսաւ թուրթակը, - միայն կը խնդրեմ, որ երթաս ամէնէն մեծ դաշտը, ուր մեծ ճառ մը կայ: Այդտեղ շատ թուրթակներ կան: Անոնց կ'ըսես, որ իրենց ընկերը վանդակի մէջ կ'ապրի, եթէ չօգնեն, ան կը մեռնի: Ինձի միայն իրենց պատասխանը բեր:
- Շատ լաւ, - ըսաւ վաճառականը ու գնաց: Գործերը վերջացուց եւ, ինչպէս խոստացեր էր, գնաց թուրթակներու դաշտը:
- Ձեր ընկերը կ'ապրի վանդակի մէջ, եթէ չօգնէք, ան կը մեռնի: Յանկարծ բոլոր թուրթակները անշնչացած վար թափեցան ճառին ծիղերէն: Վաճառականը ափսոսանքով նայեցաւ սատկած թռչուններուն եւ ետ դարձաւ:
- Ի՛նչ պատասխանեցին ընկերներս, - հարցուց անհամբեր թուրթակը:

Վաճառականը պատահաճին մասին պատմեց թուրթակին. թուրթակը յանկարծ փռուեցաւ յատակին: Վաճառականը շատ վշտացաւ. «Ինչո՞ւ ես պատմեցի իր բարեկամներուն մահուան մասին: Խեղճը սրտաճաթ եղաւ»:

Ան թուրթակը հանեց վանդակէն ու պատուհանէն դուրս շարտեց: Թուրթակը սատկած չէր: Ան անմիջապէս թռաւ գնաց: Վաճառականը հասկցաւ, որ ճառին վրայի թուրթակները իր գլխուն խաղ խաղացին եւ իրենց ընկերոջը սորվեցուցին ինչպէս վանդակէն պատիլ:


- Տերեւը, որ ուրախ կը սըվըսվար, կանգ առաւ. «Աս ի՛նչ է, ըսաւ. Այ արեւը չ'երեւար ես ալ պառկիմ ու ննջեմ»:

- Թռչնակը, որ կ'երգէր ճառին վրայ, Յանկարծ լռեց.



«Աս ի՛նչ է, ըսաւ. Ո՛չ տերեւը կը սըվըսվայ, Ո՛չ արեւը կ'երեւայ, ես ալ երթամ ու ննջեմ»:

- Նապաստակը, որ կ'ոստոստէր թուփերուն տակ, ականջ սրեց.



«Աս ի՛նչ է, ըսաւ. Ո՛չ թռչնակը կը ճըվըլայ, Ո՛չ տերեւը կը սըվըսվայ, Ո՛չ արեւը կ'երեւայ, ես ալ երթամ ու ննջեմ»:



- Որսկանը, որ անտառին մէջ որս կը փնտռէր, յանկարծ կեցաւ. «Աս ի՛նչ է, ըսաւ, Ո՛չ նապաստակը կը վազվըպէ, Ո՛չ թռչնակը կը ճըվըլտայ, Ո՛չ տերեւը կը սըվըսվայ, Ո՛ր արեւը կ'երեւայ, ես ալ երթամ ու ննջեմ»:

Լուսինը ելաւ, վար նայեցաւ Ու տեսաւ... «Ի՛նչ լուռ է, ըսաւ. Ո՛չ որսորդը ման կու գայ, Ո՛չ նապաստակը կը վազվըպէ, Ո՛չ թռչնակը կը ճըվըլտայ, Ո՛չ տերեւը կը սըվըսվայ, Ո՛չ արեւը կ'երեւայ, Մինակ ես եմ, որ անթուն եմ, երկնքին մէջ քէֆ կ'ընեմ»:

3. ԹՈՒՄԱՆԵԱՆ



ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «ԹՈՐՈՍ ՌՈՍԼԻՆ» ԿԵՐՊԱՐՈՒԵՍԻ ԴՊՐՈՑ

ՎԵՐԱՄՈՒՏ

2002-2003

Արձանագրութիւնները կը շարունակուին **ՆՂԱՆ Փալանճեան Ճեմարան**, երեկոյեան ժամը **4:00էն 6:00:**

Դասաւանդութիւնները կը սկսին **Ուրբաթ, 25 Հոկտեմբեր (միջնակարգ բաժին)** երեկոյեան ժամը **4:00էն 6:00, ՆՂԱՆ Փալանճեան Ճեմարան, Զոքաք Էլ Պլաթ: Հեռ. 01/375411:**

ԾԱՆՕԹ.- Աշակերտութեան երթուղարձը «Լեւոն Շանթ» կեդրոնէն դէպի ՆՂԱՆ Փալանճեան Ճեմարան ապահովուած է:



ՍԻՐԵԼԻ՝ ՓՈՔՐԻԿ ԸՆԹԵՐՅՈՒՆԵՐ.

Կը յուսանք, որ ամրան արձակուրդը լաւ անցուցիք եւ արդէն լծուած էք դաս սորվելու աշխատանքին:

Վստահ ենք՝ այնքան վրադաս էիք, որ քիչ մը «Պլտիկ-Սպտիկ»ը մոռցած էիք: Սակայն մենք ձեզ չէինք մոռցած: Անցեալ տարուան ձեր ուղարկած գծագրութիւնները այնքան շատ էին, որ առիթ չունեցանք բոլորն ալ հրատարակելու, որուն համար թերեւս նեղուեցաք: Բայց մի՛ նեղուիք, որովհետեւ մենք ձեր բոլորին ալ առիթ պիտի տանք մասնակցութիւն բերելու «Պլտիկ-Սպտիկ»ին: Այս թիւով փորձեցինք հին գծանկարներէն յարմարագոյնները պետեղել «Պլտիկ-Սպտիկ»ին մէջ:

Բայց այս չի նշանակեր, որ ձեր գործը վերջացաւ: Մենք անհամբեր կը սպասենք ձեր նոր գծագրութիւններուն, հաճելի գրութիւններուն, խելացի խաղերուն ու հանելուկներուն:

«Պլտիկ-Սպտիկ»



ԱՄԱՌՆԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ

Դպրոցական տարեշրջանի աւարտին, երբ «Պլտիկ - Սպտիկ»ին երրորդ թիւը հրատարակուեցաւ, արագ մը գնեցի ու անհամբեր սպասեցի, որ ժամը երեք ըլլայ ու տուն երթամ, որպէսզի կարդամ: Երբ տուն գացի, մինչ մայրս ծաշս կը դնէր, առաջին էջը արդէն իսկ սկսայ կարդալ: Ամէնէն աւելի կեդրոնացայ ժամանակացոյցին վրայ, որ պատրաստած էին Արազն ու հրակը: Ես ալ փորձեցի այս ամառ յաջորդ օրուան ժամանակացոյցս պատրաստել, որպէսզի գոնէ կանոնաւոր ըլլայ օրս: Բետեւեցէք այս օրինակին:

Ճաբաթ, 3 Օգոստոս 2002

Ժամը 7:00ին արթննալ եւ անկողինը շտկել:

Ժամը 7:00 - 7:30 ճաղիկները ջրել:

Ժամը 7:30 - 8:00 նախաճաշ:

Ժամը 8:00 - 11:00 սենեակները մաքրել:

Ժամը 11:00 - 12:30 մամային ճաշի գործերուն օգնել:

Ժամը 12:30 - 2:00 պատկերասփիւռ դիտել:

Ժամը 2:00 - 2:30 ճաշել:

Ժամը 2:30 - 5:00 դրացիին 2-3 տարեկան փոքրերուն հոգ տանիլ:

Ժամը 5:00 - 6:00 գիրք կարդալ / պատմութիւն - բանաստեղծութիւն գրել:

Ժամը 6:00 - 7:00 լոգնալ:

ՆՈՒՃԻԿ ՂԱԶԱՐԵԱՆ (Է. Կարգ Թորոսեան վարժարան)



Համազգայինի Մեմարան և Հայկ Արարեան Ճեմարան



Մզգիեր, Անթիպաս, Լիբանան



Լրիւ երկրորդական վարժարան, Մանկամտօրէն պաշալորեա

Լիբանանեան եւ Ֆրանսական ծրագիրներ

Ճեմարանի Մանկամտօրը Վերաբացուած է արդէն 16 Սեպտեմբեր 2002-ին

* Կ'ընդունի 1-էն 3 տարեկան երեխաներ:

* 2-3 տարեկանները կը հետեւին ճեմարանի փոքր վարդագոյն դպասարանի ծրագրին:

* Մանկամտօրը ընդարձակուած է, վերանորոգուած ու վերայարդարուած:

* Կը գործէ առաւօտեան ժամը 7.30-էն մինչեւ երեկոյեան ժամը 5:

* Հոկտեմբերէն սկսեալ՝ կեսօրուան ճաշի դրութիւն փափաքողներուն համար:

* Մատչելի գիներ:

Հեռ.։ 04-712602/3/4

E-Mail: djemaran@inco.com.lb

